ՂԱԶԱՆՉԻ

Վարչական ղեկավար՝ Սերգեյ Եգանյան

Հեռ: 098 40 31 31

Մակերես՝ 32.11 կմ²

Բնակչություն՝ 630

Ինդեքս՝ 2806

s.s.eganyan@mail.ru

Բնակավայրը հիմնադրվել է 1852-1953 թվականներին: Նախնիները ներգաղթել են Արևմտյան Հայաստանի Ալաշկերտ գավառի Իրիցու գյուղից և հաստատվել պատմական Աշոցք գավառի կենտրոն հանդիսացող Աշոցք ավանի ավերակների մոտ: Գյուղը սկզբում կոչվել է Ղայդուլի, ապա Ղազանչի: Հիմնադրման պահին գյուղն ուներ ընդամենը 24 տնտեսություն, որը հետագայում հասավ 330-ի: Բնակավայրի մոտ 1968 թվականին գյուղին մերձակա աղբյուրների ջուրը Գյումրի քաղաք տեղափոխվելու պատճառով բնակչությունը տեղահանվել է և տեղափոխվել նոր բնակատեղի:

Գյուղն ունի միջնակարգ դպրոց, ակումբ, գրադարան, մանկապարտեզ, կապի բաժանմունք: Ղազանչիում են ծնվել ԳԱԱ ակադեմիկոս, պատմաբան Վարդգես Ալեքսանի Միքայելյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասեր, հնագետ-ազգագրագետ Սարգիս Բարդուղիմեոսի Հարությունյանը: